ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 8

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 11-ը՝ Նորիկ Անդրեասյանը, Տիգրան Գալստյանը, Արտաշես Խաչատրյանը, Վահագն Մկրտչյանը, Կարեն Շահազիզյանը, Արմենակ Սարգսյանը, Բաբկեն Վարդանյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը, Սարիբեկ Օվոյանը, Սամվել Շուխյանը: Բացակայում էին՝ Ազատ Զաքարյանը, Աշոտ Հունանյանը, Նավասարդ Պետրոսյանը և Վահե Մովսիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Խաչատրյանը, Ա. Մնացականյանը, Ս. Ղազարյանը, գլխավոր մասնագետներ՝ Ս. Սահակյանը, Մ. Յաշչյանը, մասնագետ Մ. Փարվանյանը, ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Ա. Օրուջյանը, լրագրող Լ. Գարանյանը, ՏԿՏ-ի պետ՝ Ա. Մինասյանը:

Մինչ օրակարգի հաստատմանն անցնելը, ավագանու անդամ Ա. Սարգսյանն առաջարկեց ավագանու նիստերը հրավիրել այլ ժամի /օրվա երկրորդ կեսին/, որպեսզի իրենց հիմնական աշխատանքին չխանգարի:

Այնուհետև հայտարարությամբ հանդես եկավ ավագանու անդամ Կ. Շահազիզյանը, բնակչության և իր անունից շնորհակալություն հայտնելով համայնքի ղեկավարին, քաղաքի տարածքում իրականացվող մեծ ծավալի բարեկարգման, մաքրման, ինչպես նաև նստարանների և աղբամանների տեղադրման համար: Միաժամանակ նշվեց, որ պետք է բացատրական մեծ ծավալի աշխատանք կատարվի ժողովրդի հետ, եղածը պահպանելու և խնամքով վերաբերվելու մշակույթ ձևավորելու հարցում:

Արված առաջարկությունից և հայտարարությունից հետո միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ

1. <<Համայնքի ղեկավարներ՝ հանուն տնտեսական զարգացման>> /ՀՀՏԶ/ նախաձեռնությանը միանալու մասին:

   /Զեկուցող՝ Գ.Եղիազարյան/

2. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

3. Աշտարակ համայնքին պատկանող որոշակի գույք նվիրատվությամբ տրամադրելու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

4. Արշակ Օրուջյանին <<Աշտարակի գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին:

   /Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

5. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված 177-016 ծածկագրից 0.0205հա և 264-014 ծածկագրով 0.064հա բնակավայրերի նշանակության հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ա.Մնացականյան/

6. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա.Մնացականյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա.Մնացականյան/

9. Աշտարակ քաղաքի Նարեկացու փողոցի N13 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ծառի հատում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա.Մնացականյան/

Լ Ս Ե Ց Ի Ն - 1 - <<Համայնքի ղեկավարներ՝ հանուն տնտեսական զարգացման>> /ՀՀՏԶ/ նախաձեռնությանը միանալու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Եղիազարյանը:

Զեկուցման մեջ նշվեցին այն առավելությունները, որոնք կարող են ի նպաստ քաղաքի լինել ծրագրի որոշ փուլեր անցնելու դեպքում:

Միաժամանակ առաջարկվեց ծրագրի շրջանակներում տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու և կոնտակտային անձ հաստատել Գ. Եղիազարյանին:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին, զեկուցողին և համայնքի ղեկավարին հարցեր ուղղեցին Կ. Շահազիզյանը, Ս.Օվոյանը և Ա.Սարգսյանը: Ելույթներում եղան և կողմ, և դեմ կարծիքներ, ծրագրին մասնակցելու նպատակահարմարության վերաբերյալ:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Գ.Եղիազարյանն ու Թ.Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում դեմ էր Կ.Շահազիզյանը, ձեռնպահ՝ Ս.Օվոյանը:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին

Օրակարգային նշված հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա. Խաչատրյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ առաջարկվում է հարկային արտոնություն տալ 3 իրավաբանական և 32 ֆիզիկական անձի: Արտոնության գումարը կազմում է գույքահարկի գծով 1.380.996 ՀՀ դրամ և հողի հարկի գծով 198.224 ՀՀ դրամ:

Առանձին հարցեր ճշտելու համար զեկուցողին հարցեր տվեցին և պատասխաններ ստացան Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը և Ա. Սարգսյանը:

Առաջարկության վերաբերյալ առարկություններ չեղան:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ - 3 - *Աշտարակ համայնքին պատկանող որոշակի գույք նվիրատվությամբ տրամադրելու մասին*

Հարցը ներկայացրեց Ա. Խաչատրյանը: Նա նշեց, որ օգտագործված երկու համակարգիչ նպատակահարմար է գտնվել հատկացնելու ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության բաժնին և մեկ հատ PRIMA մակնիշի հեռուստացույց ԵԿՄ Աշտարակի տարածքային բաժանմունքին /ղեկավար՝ Գ.Սմբատյան/:

Որոշակի պարզաբանումներ տվեց նաև ղեկավար Թ. Շահվերդյանը:

Ելույթ ունեցան և առաջարկությունը պաշտպանեցին Կ. Շահազիզյանն ու Ս.Օվոյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ - 4 - *Արշակ Օրուջյանին <<Աշտարակի գեղարվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Զեկուցողը նշեց, որ առաջադրվող թեկնածուն շնորհալի երիտասարդ է, իր ունակությունների շնորհիվ հույս է ներշնչում, որ դպրոցի աշխատանքները նոր որակի կհասցվեն: Եթե հույսերը կարճ ժամանակահատվածում կյանքի չկոչվեն, հարցը նորից կքննարկվի և կտրվի արժանի գնահատական:

Թեկնածուի կենսագրական համեստ տվյալները լսելուց հետո զեկուցողին և Ա. Օրուջյանին հարցեր տվեցին Մ.Յաշչյանը, Կ.Շահազիզյանը և Ա.Սարգսյանը: Ա.Սարգսյանը միաժամանակ առաջարկեց հաստատել Օրուջյանի թեկնածությունը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ - 5 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված 177-016 ծածկագրից 0.0205հա և 264-014 ծածկագրով 0.064հա բնակավայրերի նշանակության հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի նորընտիր պետ Արմեն Մնացականյանը:

Զեկուցողը նշեց, որ 177-016 և 269-014 ծածկագրերով հողակտորները համայնքային սեփականություն ճանաչելու նպատակը թելադրվել է օրվա պահանջով և նախկինից եկող սխալն ուղղելու մտայնությամբ: Հայտնի է նաև դրանց հետագա օգտագործման նպատակը:

Զեկուցողին հարցեր տվեցին և պատասխաններ ստացան Տ.Գալստյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը և Ա.Սարգսյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ -6 - *Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը ներկայացրեց նաև օրակարգային 6-րդ հարցը:

Խնդիրը վերաբերվում է 02-001-0139-0001 ծածկագրից 20քմ և 02-001-0407-0065 ծածկագրից 20քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողակտորներին:

Փոփոխության նպատակը կապված է ենթակայաններ կառուցելու հետ:

Լրացուցիչ պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավարը:

Հարցի հետ կապված իրենց կարծիքը հայտնեցին, այնուհետև առաջարկությանը համաձայնություն տվեցին Կ.Շահազիզյանը, Ա.Խաչատրյանը և Բ.Վարդանյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 7</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Արմեն Մնացականյանը:

Նա խնդրեց համաձայնություն տալ 520-018 ծածկագրից 0.2հա և 841-015 ծածկագրից 0.1հա գյուղ. նշանակության հողակտորն օտարելու աճուրդ-վաճառքով: Առաջարկվեց նաև աճուրդի մեկնարկային գին սահմանել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Զեկուցողին հարցեր տվեցին Կ.Շահազիզյանն ու Վ.Մկրտչյանը:

Հարցերին պատասխանեցին համայնքի ղեկավարն ու բաժնի պետը:

Քվեարկության արդյունքում ընդունվեց միաձայն որոշում:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 8</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգային հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ա.Մնացականյանը և լրացուցիչ պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավարը:

Առաջարկվեց համաձայնություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու 24քմ բնակավայրերի նշանակության հողակտոր 843-001 ծածկագրից, մեկնարկային գին առաջարկելով կադաստրային արժեքի 65%-ը:

Զեկուցողին հարցեր տվեցին Վ.Մկրտչյանն ու Կ.Շահազիզյանը:

Պարզաբանման մեջ նշվեց, որ տարածքը գտնվում է Տիգրան Մեծի 29Ա շենքի հարևանությամբ:

Քվեարկության արդյունքում ընդունվեց միաձայն որոշում:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 9</u> - Աշտարակ քաղաքի Նարեկացու փողոցի N13 հասցեում գտնվող տնամերձ հողամասում ծառի հատում կատարելու թույլտվություն տալու մասին

Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը նշեց, որ քաղաքի Նարեկացու փողոցի N13 հասցեում գտնվող հողամասում առկա է փտած բնով ընկուզենի, որն իրենից որոշակի վտանգ է ներկայացնում և ենթակա է կտրման:

Ընդառաջելով ծառի սեփականատիրոջ խնդրանքին՝ հարցը ներկայացվել է քննարկման:

Նիստին ներկա գտնվողները լսելով նաև համայնքի ղեկավարի պարզաբանումները, ծառը կտրելու համար տվեցին իրենց համաձայնությունը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:
Ավագանին աշխատանքներն ավարտեց 2017 թվականի մայիսի 25-ին:

ԱՎԱԳԱՆԻ՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ
ՏՊ
Ա.Հ.